АННА МАТИНЯН

ВОПРОС ПРОДВИЖЕНИЯ ПО ИННОВАЦИЙ В РА

Ключевые слова: *инновационная деятельность, прогресс, экономический рост, конкурентная национальная инновационная система.*

В статье описывается инновационная система РА. Совершилос отрожение на научных сферах нашей страны, были предсталение все условия, при наличе которых иновация быдет фактором экономического роста РА.Возбудались также причины, для чего нужно ставить акцент именно на развитие этой отрасли. Была сделали выводы, и даны предложения для обеспечивания прогресса и дальнейшего развитя сферы.

ANNA MATINYAN

THE ISSUE OF INNOVATION PROMOTION IN THE REPUBLIC OF ARMENIA

Key words: *innovation aqctivity, progress, economic growth, competitive national innovation system.*

The innovation system of Armenia is described in the article .The reference is made to the sphere of science of our country. All conditions have been introduced, in case of availability, innovation wiIl become the factor of the economic growth of the Republic of Armenia.There are also reasons why the emphasis should be on the development of that branch.Conclusions have been done to provide the progress and further development of the sector.

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Տնտեսագիտություն, բակալավրիատ,
3-րդ կուրս

ԹՈՐՍԹԵՅՆ ՎԵԲԼԵՆԻ ԲԻԶՆԵՍԻ ԵՎ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴՐՈՒՅԹԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. *բիզնես, ինդուստրիա, մրցակցություն, ձեռնարկատիրություն, շահույթ, աշխատավարձ, պարապ խավ*

Հոդվածում քննարկվել են ինստիտուցիոնալիզմի հիմնադիր Թորսթեյն Վեբլենի ինդուստրիայի և բիզնեսի հարաբերակցության համադրույթը ու դրա արդիական դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում: Ըստ Վեբլենի՝ բիզնեսի ներկայացուցիչները ձգտում են սեփականության, եկամուտների տիրապետման ու հանդես են բերում ցուցադրական սպառման վարքագիծ, առաջնորդվում են եսասիրական մղումներով և գիշատչական վարքագծով: Մինչդեռ, ինդուստրիայի ներկայացուցիչները հակված են ալտրուիստական վարքագծին ու արտադրության զարգացման պտուղները ամբողջ հասարակության շահերին ծառայեցնելուն:

Ինստիտուցիոնալիզմի ակունքները սկիզբ են առնում Թորսթեյն Վեբլենի մշակումներից: Վեբլենը իր ժամանակի մարդկանց վարքագիծը բացատրում էր երկու հիմնական ավանդույթներով, որոնք անվանում էր «**մրցակցության բնազդ**» (մյուսներից առաջ անցնելու ցանկությունը) և «**վարպետության բնազդ**» (կողմնորոշում դեպի բարեխիղճ և արդյունավետ աշխատանքը): Ըստ Վեբլենի՝ մրցակցության բնազդը շուկայում սեփականության և մրցակցության հիմքում է: Հենց այս բնազդով է նա բացատրում **ցուցադրական սպառման** իր համադրույթը,[1] երբ անհատը ընտրություն կատարելիս հիմնվում է ոչ թե սեփական օգտակարության մեծացման վրա, այլ փորձում է առավելագույնի հասցնել իր հեղինակությունը այլոց աչքում:[2]

Կապիտալիզմի հիմնական տարրերը Վեբլենը համարում է մանր արտադրությունն ու կապիտալիստական ձեռնարկատիրական համակարգը կամ համապատասխանաբար՝ **ինդուստրիան** ու **բիզնեսը**: Նա նշում է, որ ինդուստրիան մարդու համար ստեղծում է օգտակար բարիքներ, նախապատվությունը տալիս է օգտակարությանն ու հասարակական օգուտին, այլ ոչ թե անհատական շահին: «Սարքավորումներն ու կապիտալը օգտակար են միայն այն չափով, որչափով դրանց սեփականատերերը գների բարձրացման ճանապարհով կարող են յուրացնել նյութական ավելցուկը: Ձեռնարկատիրոջ հիմնական նպատակն ու ձգտումը շահույթի ստացումն է, այլ ոչ թե արտադրության զարգացումը»,- պնդում է Վեբլենը:[3]

Ըստ Վեբլենի՝ պատմականորեն կապիտալիզմը անցնում է զարգացման երկու փուլ՝ 1. **ձեռնարկատիրոջ գերակայության փուլ**, որի ընթացքում նրան է պատկանում ամբողջ իշխանությունն ու սեփականությունը և 2. **ֆինանսիստի գերակայության փուլ**, երբ ֆինանսիստները, այսպես ասած, «նեղություն են պատճառում» ձեռնարկատերերին: Վերջին փուլին է հատկապես բնորոշ ինդուստրիայի և բիզնեսի միջև հակասությունը, քանի որ ինդուստրիայի և բիզնեսի շահերը առհասարակ չեն համընկնում:[4]

Ինդուստրիա ասելով Վեբլենը հասկանում էր նյութական արտադրության ոլորտը՝ հիմնված մեքենայական արտադրության վրա, իսկ **բիզնես** ասելով՝ ամենատարբեր հարաբերությունների ոլորտը (սպեկուլյացիա, առևտուր, վարկեր և այլն): Ընդ որում, ինդուստրիան ներկայացնում են ոչ միայն մանր ձեռնարկատերերը, այլ նաև ինժեներները, տեխնոկրատները, աշխատողները: Նշված անհատները հետաքրքրված են արտադրության կատարելագործմամբ և հենց այդ պատճառով էլ արտադրության առաջընթացն ապահովողներ են:[5]

Ի տարբերություն ինդուստրիայի՝ բիզնեսի ներկայացուցիչները կենտրոնացած են գլխավորապես շահույթի ստացման վրա, և արտադրությունը նրանց մեծ հաշվով չի էլ հետաքրքրում: Նրանց հիմնական նպատակը շահույթի ստացումն է, այլ ոչ թե արտադրության զարգացումը: Բիզնեսմենները կարևորում են նվազագույն արժեքը: Նրանց համար սարքավորումներն ու կապիտալը օգտակար են միայն այն չափով, որչափով դրանց սեփականա-

---

[1] Տե՛ս Т. Веблен, Теория делового преприятия. Москва: Дело, 1984, էջ 108:
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 231:
[3] Նույն տեղում:
[4] Տե՛ս Т. Веблен, Теория делового преприятия. Москва: Дело, 2007, էջ 288:
[5] http://www.theselfpublishingdirectory.com/ddata/56

տերերը գների բարձրացման ճանապարհով կարող են յուրացնել նյութական ավելցուկը:

Ըստ Վեբլենի՝ բիզնեսի ներկայացուցիչների վարքագիծն ուղեկցվում է **եսասիրական մղումներով ու գիշատչական բնազդով**: Նրանք ձգտում են իրենց դրամական եկամուտները առավելագույնի հասցնել ֆինանսական զանազան չարաշահումների ու խարդախությունների միջոցով (որոնք ամենից հաճախ ֆինանսավորվում են վարկերի բարդ բուրգով): Չարաշահումները հանգեցնում են գործնական ակտիվության անկման, բազմաթիվ ֆիրմաների սնանկության, կլանումների և միաձուլումների պատճառ են դառնում, ինչի հետևանքով էլ ուժգնանում է ու ավելանում մենաշնորհացման մակարդակը, որը բիզնեսին թույլ է տալիս ուժեղացնել իր վերահսկողությունը ինդուստրիայի նկատմամբ:[1]

Ըստ Վեբլենի՝ ինդուստրիայի և բիզնեսի հակասությունն այն է, որ ինդուստրիայի ոլորտում աշխատում են այն խավերը, որոնք անհրաժեշտ են հասարակությանը (իրենց աշխատանքի արդյունքների շնորհիվ), իսկ բիզնեսի ներկայացուցիչները ներառված են այսպես կոչված «**պարապ խավի**» մեջ, որոնք որևէ օգտակար բան հասարակության համար չեն անում: «Պարապ խավի» մեջ Վեբլենը ներառում է համեմատաբար խոշոր ֆինանսական մագնատներին, ֆինանսական ակտիվներ տնօրինողներին: Վեբլենի կարծիքով՝ բիզնեսի և ինդուստրիայի միջև հակասությունը, հետևաբար նաև շուկայական տնտեսության վերը նշված թերությունները կարող են շտկվել, եթե իշխանությունը փոխանցվի երկրորդին, այսինքն՝ ինդուստրիային, մասնավորապես՝ **ինժեներներին և տեխնոկրատներին**: Նա կարծում է, որ ապագայում հենց այդպես էլ կլինի՝ իշխանությունը կփոխանցվի ինժեներներին, և գլխավոր դերը կպատկանի հենց նրանց:

Եթե ինդուստրիայի ու բիզնեսի հարաբերակցությունը փորձենք տեղայնացնել կամ համապատասխանեցնել Հայաստանին, ապա կարելի է վստահորեն ասել, որ ինդուստրիայի հատվածը որպես այդպիսին առկա է, սակայն որպես արտադրության զարգացմանը և հասարակական օգուտին կողմնորոշված ոլորտ, մեղմ ասած, **վառ արտահայտված չէ**: Ինդուստրիայի՝ որպես վարպետության բնազդով առաջնորդվող և հանրային շահին կողմնորոշված ոլորտի բացակայության գլխավոր պատճառը կարելի է համարել այն, որ հայ ժողովրդի մեծամասնությունը օպորտունիստական վարքագծի կրող է, ու այդ հենքի վրա կատարված բարեփոխումները ավելի շուտ փակուղային իրավիճակների են հանգեցրել:

Այսինքն, հայը մեծավ մասամբ կողմնորոշված է դեպի իր անհատական շահը, օգուտը և ամեն կերպ փորձում է առավելագույնի հասցնել իր դրամական եկամուտները ինդուստրիայի ոլորտում, մասնավորապես՝ իր աշխատավարձը, իսկ արտադրության զարգացումը և, առհասարակ, արտադրության ոլորտը նրան մեծ հաշվով չի էլ հետաքրքրում: Վեբլենը նշում էր, որ ինդուստրիայի ներկայացուցիչների մեծամասնության համար գիտատեխնիկական առաջընթացը ավելի կարևոր է, քան իրենց հարստացումը: Սակայն հայաստանյան իրողությունների պարագայում դա այդքան էլ այդպես չէ: Փոխարենը Հայաստանում չափազանց վառ է արտահայտված մյուս հատվածը՝

[1] Տե՛ս նույն տեղը:

բիզնեսը՝ իր «պարապ խավի» ներկայացուցիչներով, որոնք հաճախ առաջնորդվում են եսասիրական մղումներով և միայն իրենց շահույթը առավելագույնի հացնելու «բնազդով»:

Հենց սա է պատճառը, որ հայաստանյան մի քանի խոշոր գործարարներ կարողացել են գրեթե ամբողջությամբ գրավել հայաստանյան շուկան, արտադրության ոլորտը և իրենց են ենթարկել ինդուստրիայի ներկայացուցիչներին, ինչի հետևանքով Հայաստանում արտադրության զարգացումը տեխնոլոգիապես ցածր մակարդակի վրա է: Սրա վառ ապացույցն է այն, որ **Հայաստանը համաշխարհային շուկայում հիմնականում հանդես է գալիս որպես պատրաստի արտադրանք ներմուծող և հումք արտահանող**: Վերլենը «պարապ խավի» ներկայացուցիչների շարքն է դասում հատկապես խոշոր ֆինանսական մագնատներին և խոշոր ձեռնարկատերերին և հատկանշում փոքր ու միջին ձեռնարկությունների դերը երկրի տնտեսության զարգացման գործում:

Փաստենք, որ 1990-ական թվականների սկզբին Հայաստանում ազատական բարեփոխումների հետևանքով տեղի է ունեցել տնտեսության ծայրահեղ ապաարդյունաբերականացում: Բավական է նշել, որ 1991 թ. արդյունաբերության մասնաբաժինը երկրի ՀՆԱ-ում կազմում էր 40%, 2017 թ. այն իջավ 16,7%-ի մակարդակի,[1] ընդ որում՝ նվազեց բարձրտեխնոլոգիական արտադրանքի մասնաբաժինը: ԽՍՀՄ տարիներին Հայաստանում կային 700-800 միջին և խոշոր ձեռնարկություններ, որոնք ներառում էին այդ ժամանակահատվածի չափանիշներով գրեթե բոլոր արդյունաբերական ճյուղերն ու արտադրությունները, այսօր սակայն դրանց մեծ մասը գոյություն չունի:

ԽՍՀՄ փլուզումը, շրջափակումները, ղարաբաղյան պատերազմին հաջորդած շուկաների կազմալուծումը ձևախեղեցին մեր տնտեսության կառուցվածքը: Հայաստանում տեղի ունեցավ տնտեսակարգի փոփոխություն: Կապիտալի կազմավորումը ըստ էության ընթացավ ավանդական ճանապարհով, այն է՝ խոշոր կապիտալի (բիզնեսի) նախասկզբնական կուտակումը տեղի ունեցավ ու շարունակում է ընթանալ դասական կանոններով: Դա նշանակում է՝ գլխավոր շեշտը դրվում է կապիտալի կարճ շրջապտույտ ու մեծ շահույթներ ենթադրող ճյուղերի գերակա աճի, առաջին հերթին՝ առևտրի, ֆինանսական, բանկային ծառայությունների, զվարճանքի ինդուստրիայի սրընթաց աճի վրա:

ՀՀ տնտեսության մեջ ավելացված արժեքի ստեղծման կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ ստեղծված նոր արդյունքի բաշխումը աշխատավարձի ու շահույթի միջև տեղի է ունենում ծայրահեղ անհամաչափ, ընդ որում՝ այդ գործընթացը առավել բնորոշ է երրորդ աշխարհի տնտեսություններին: Ստորև բերված աղյուսակից երևում է, որ ՀՀ տնտեսության մեջ վերջին 10 տարիների ընթացքում շահույթի և աշխատավարձի միջև անջրպետը խորացել է՝ հօգուտ առաջինի (տե՛ս աղյուսակ 1):

[1] [1] http://armstat.am/file/doc/99504393.pdf

Աղյուսակ 1

ՀՆԱ-ի, շահույթի և աշխատավարձի շարժընթացը ՀՀ-ում** 2008–2017 **թթ.*

		2008	2010	2012	2014	2016	2017
1	**ՀՆԱ (մլրդ դրամ)**	3668.2	3460.2	4266.5	4828.6	5079.9	5459.4
2	**Շահութահարկ (մլրդ դրամ)**	86,212	77,813.01	118,653.40	103,597.40	127,186.50	109,976.80
3	**Եկամտահարկ (մլրդ դրամ)**	53,749	73,939.88	91,667.30	301,549.90	332,778.70	341,226.80
4	**Շահույթ (մլրդ դրամ)**	431,060.00	389,061.50	593,267.00	517,898.00	635,932.00	548,840.00
5	**% ՀՆԱ-ի նկատմամբ**	11.8	11.3	13.9	10.7	12.5	10.1
6	**Աշխատավարձ (մլրդ դրամ)**	297,678.21	339,473.16	367,971.98	458,438.00	324,307.00	321,216.00
7	**% ՀՆԱ-ի նկատմամբ**	8.1	9.8	8.6	9.5	6.4	5.9

* *Աղյուսակը կազմվել է ՀՀ ԱՎԾ 2008-2017 թթ. տարեգրքերի հիման վրա*

Աղյուսակից հետևում է, որ վերջին տասնամյակում տնտեսության մասնավոր հատվածի շահույթի մասնաբաժինը ՀՀ ավելացված արժեքի (ՀՆԱ-ի մեջ) մնացել է կայուն բարձր մակարդակի վրա: Ընդ որում, բացարձակ առումով ևս այն հարաշարժ աճել է մոտավորապես 30%-ով՝ 431 միլիարդ դրամից հասնելով 548.8 միլիարդի: Մյուս կողմից, աշխատավարձի մասնաբաժինը, լինելով ավելի փոքր, քան շահույթինը, հարաշարժ նվազել է՝ 2008 թ. 8.1%-ից իջնելով մինչև 5.9%: Իհարկե, վերջին տարիների առկա իրողությունները, հատկապես՝ 2008-2009 թթ. ճգնաժամը, ինչպես նաև ՀՀ տնտեսության մեջ 2015-2016 թթ. արձանագրված տնտեսական անկումը իրենց ազդեցությունն են թողել այդ գործընթացի վրա, սակայն, մյուս կողմից այդ բացասական գործոնները կարծես թե չեն ազդել բիզնեսի[1] եկամուտների ծավալների վրա: Նույն պատկերն է ձևավորվում նաև, երբ համեմատում ենք բիզնեսի (կամ կապիտալի սեփականատերերի) և աշխատավարձ ստացող մարդկանց հարկերի շարժընթացը հիշյալ ժամանակահատվածում (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ շահութահարկի և եկամտային հարկի շարժընթացը** 2007–2017 **թթ.*

		2007	2008	2010	2012	2014	2016	2017
1	Շահութահարկ (մլրդ դրամ)	75,503.6	86,212	7,813.01	118,653.4	103,597.4	127,186.5	109,976.8
2	Եկամտահարկ (մլրդ դրամ)	46,828.4	53,749	3,939.88	91,667.3	301,549.9	332,778.7	341,226.8

* *Աղյուսակը կազմվել է ՀՀ ԱՎԾ և ՊԵԿ տվյալների հիման վրա*

Աղյուսակ 2-ից երևում է, որ շահութահարկի ծավալը ՀՀ ՀՆԱ-ում ավելի քան համեստ մասնաբաժին է ունեցել՝ 2007 թ. 75.3 մլրդ դրամից 2017 թ. հասնելով 109.9 միլիարդի (աճը՝ 32%): Եկամտահարկը (ներկայումս՝ եկամտային հարկ, որը ներառում է նաև սոցիալական ապահովության վճարները)

[1] http://armstat.am/file/doc/99504393.pdf

աճել է բազմապատիկ՝ 2007 թ. 46.8 մլրդ դրամից 2017 թ. հասնելով 341.2 միլիարդի:



Գծապատկեր 1. ***Շահութահարկի և եկամտահարկի շարժընթացը ՀՀ-ում*** *2007–2017* ***թթ.***

Իհարկե, ՀՆԱ-ի մեջ շահույթի համեստ մասնաբաժինը հետևանք է նաև տնտեսության մեջ առկա ստվերայնության, երբ գործարար մարդիկ իրենց շահույթի զգալի մասը մտցնում են ծախսերի տակ ու այդկերպ խուսափում հարկեր վճարելուց: Նույնիսկ պաշտոնական գնահատականներով ՀՀ-ում ստվերային տնտեսության ծավալները կազմում են շուրջ 30%[1]:

Եթե Հայաստանի տնտեսության պարագայում գնահատենք հիմնարար կառուցվածքային խնդիրները, ապա կտեսնենք, որ դրանք կապված են չափազանց թույլ միկրոտնտեսական պայմանների հետ, այն է՝ տնտեսության բազմազանեցման (դիվերսիֆիկացման) ցածր աստիճան ու ոչ մրցունակ կառուցվածք, ինչպես նաև կապիտալակազմավորման այնպիսի մոդել, որը չի երաշխավորում տնտեսության արդիականացումը և այնպիսի ոլորտների ու ճյուղերի գոյացումը, որոնք հնարավոր կդարձնեն բարձրտեխնոլոգիական արտադրությունների առաջացումը: Խոսքը ինչպես հանքարդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության և շինարարության մասին է: Բոլոր դեպքերում ավելացված արժեքի մեծ մասնաբաժին պարունակող ապրանքների զգալի ծավալներ Հայաստանում դեռևս չեն ստեղծվում:

Հայաստանի Հանրապետությանը հարկավոր է տնտեսական զարգացման մի այնպիսի մոդել, որը հիմնված կլինի տնտեսության և արտահանման շուկաների բազմազանեցման վրա, ընդ որում՝ մասնագիտացումը պետք է ընթանա այնպիսի արտադրատեսակների գծով, որոնք գիտատար են, տեխնոլոգիատար ու պարունակում են ավելացված արժեքի զգալի մասնաբաժին:

Սակայն խնդիրն այն է, որ Հայաստանը մեկ շնչի հաշվով շատ ցածր եկամուտ ունեցող երկիր է, ու այս պայմաններում ակնկալել, որ հնարավոր կլինի տնտեսությունը կարճ ժամանակահատվածում զարգացնել հենքային բարձր տեխնոլոգիաների բազայի վրա, այնքան էլ իրատեսական չէ: Խնդիրը նաև այն է, որ այսօր Հայաստանը գրեթե այնքան է ներմուծում, որքան արտաքին մասնավոր տրանսֆերտների ծավալներն են. արտաքին մասնավոր տրանսֆերտները կազմում են 2,5-3,0 մլրդ դոլար: Մոտավորապես նույնքան են ներմուծման ծավալները: Սա նշանակում է, որ Հայաստանը դարձել է մի

[1] www.armstat.am

վայր, որտեղ հանդիպում են դրսից երկիր մտած ապրանքը և ... փողը: Մեծ հաշվով, նման տնտեսական մոդելը անչափ խոցելի է: Այլ բան է, որ այս փուլում խնդիր դրվի տնտեսությունը զարգացած երկրներից ներմուծված կամ փոխառված բարձր տեխնոլոգիաների հիմքի վրա զարգացնելու, ու ներմուծման մեջ գերակշռեն բարձր տեխնոլոգիաներն ու տեխնոլոգիատար ինվեստիցիոն ապրանքները: Սա այն է, ինչը գործնականում կոչվում է զարգացման «**նմանակման**» (իմիտացիոն) մոդել: Երբ ներմուծվում են ինովացիոն բարձր տեխնոլոգիաներ, որոնք թույլ են տալիս (շնորհիվ Հայաստանի մնացյալ մրցակցային առավելությունների) ստանալ բարձր շահույթ, այդ դեպքում ներմուծումը կարող է որոշակի ժամանակահատվածում նպաստել տնտեսության բազմազանեցման խնդրի լուծմանը:

АНДРАНИК МАРГАРЯН

КОНЦЕПЦИЯ СООТНОШЕНИЯ БИЗНЕСА И ИНДУСТРИИ ТОРСТЕЙНА ВЕБЛЕНА И СОВРЕМЕННОСТЬ

Ключевые слова: *бизнес, индустрия, конкуренция, предпринимательство, прибыль, зарплата, праздный класс.*

В статье рассматривается концепция соотношения индустрии и бизнеса основателя институционализма Торстейна Веблена, и его современных проявлений в Республике Армения. Согласно Веблену, представители бизнеса стремяться владению собственности и доходов и проявляют поведение демонстративного потребления, руководствуются эгоистичными стремлениями и хищническим поведением. Между тем, промышленники более склонны к альтруистическому поведению и поставки плодов развития производства на службу интересам всего общества.

ANDRANIK MARGARYAN

THE CONCEPT OF THE RATIO OF BUSINESS AND INDUSTRY TORSTEIN VEBLEN AND MODERNITY

Key words: *business, industry, competition, entrepreneurship, profit, salary, idle class.*

The article considers the concept of the ratio of industry and business to the founder of institutionalism Torstein Veblen, and its modern manifestations in the Republic of Armenia. According to Veblen, business representatives strive to own property and income and exhibit behavior of demonstrative manifestation, guided by selfish desires and predatory behavior. Meanwhile, industrialists are more prone to altruistic behavior and the supply of the fruits of the development of production at the service of the interests of the whole society.